

Առաջինը: Երեսփոխանաց ժողովին անմիտ ժխտոյնքուն պատասխան տուաւ տէրութիւնը՝ ժողովը փականելով: Ապէսցաւ մանաւանդ գերմանական տարրը, վասն-զի ասոնք՝ անիրաւ գողութիւն՝ գողութիւն կը կարծէին թէ արդէն հասած ըլլան իրենց նպատակին, եւ Կոմս Բատենի պիտի ստիպուի իւր “լեզուաց կարգադրութեան”, հրամանագիրն ետ առնուլ: Զարմանալի երեւոյթ. տէրութիւնը կը զիջանի “ազգասիրական նեղ, տեսութիւններն ոչինչ համարել, եւ հաստատարապէս ամէն հպատակաց արդար ըողորներն ընդունիլ, իսկ հպատակներէն մէկ մասը անիրաւ կը գտնէ այս զիջողութիւնը: Առողջ դատաւարանի պակասութիւնն է յամենայն դէպս այս երեւոյթին պատճառը:

Ասիական թագաւորութիւններ: Ծապոն դարձեալ օրւան դիցազն է քանի մը լրագրաց համար, վասն զի Հաւայի տէրութեան հետ ունեցած դաշնադրութեան մը բռնաքարութիւնը սաստիկ գրգռած է Ծապոնի տէրութիւնը: Արդէն դիւանագէտ պաշտօնեայ մը եւ երկու պատերազմական նաւ գացած են Հոնոլուլուի վրայ (այս կողմէն մայրաքաղաքին վրայ), եւ Ծապոնական լրագիրները սաստիկ կատողած կը գրեն, կ'ըսէ հեռագիր մը, ոչ այնչափ այս դաշնաց բռնաքարութեան վրայ, որչափ այն հետաքրքրութեան, որով Ամերիկայի տէրութիւնը իւր մտադրութեան առարկայ ըրած է իրեն Հաւայի կղզիները: — Երկրորդ ասիական տէրութիւն մը՝ որուն վրայ այս ժամուս շատ կը խօսուի, է Սիամի թագաւորութիւնը: Թագաւորը դէպ ի եւրոպա ըրած ուղեւորութեան մէջ արտաքու կարգի համակրութեամբ կ'ընդունուի ամէն տեղ, իրեն նշան այն յարգանաց, զոր կու տայ իրեն Եւրոպական դիւանագիտութիւնը, Սիամի թագաւորութեան մէջ ըրած բարենորոգմանց համար: Եթէ կրնանք հաստատաւ լրագրաց խօսքերուն,

Սիամի թագաւորութիւնն ալ երկրորդ Ծապոն մ'ըլլալու նշաններ կու տայ: Եթէ ստույգ է՝ չենք զարմանար, վասն զի քաց ի “փտած Եւրոպայէն”, ինչպէս կ'ըսեն Ամերիկացիք, ամէն տեղ նոր կենդանութեան նշաններ կան. կը քաղձանք միայն որ լուսաւորութիւն եւ կրթութիւն առած ժամանակ՝ եւրոպական դատաւարտեցի անտարբերութեան ախտէն ալ չվարակին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ՄԱՍՏԻԱԳՐԱԿԱՆ — Փաստոս Բիզանդացի եւ իւր պատմութեան խարդախողը. 193:

ՊԱՍՄԱԿԱՆ — Պատմական տեղեկութիւնք Եդիսաքեթուպոլսոյ Հայոց վաղեմի վարչութեան վրայ. 197:

ՆԵՆՍԱԳՐԱԿԱՆ — Բժիշկ Տոքթ. Դաւիթ Խան Մկրտչեան Դաւթեանց Կարեւոր. 203:

ԼԵՋՈՒՍԻՍԿԱԿԱՆ — Արդի Լեզուագիտութիւնը 212: ՄԱՍՏԻԱՍՈՒՍԿԱՆ — Նոր հատարակութիւն. 214:

ՅՈՒՆԵՐԵՐ

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ — 1. “Արգարու զրոյցը Մ. Խորենացոյ Հայոց Պատմութեան մէջ:” — 2. “Յուսակ հայ ձեռագրաց Մատեն. Միւթ. Վիեննայ.” — 3. Աղեքսանդրի զրոյցը: — 4. Հայ եկեղեցիք: — 5. “Հայ վէպը Մ. Խորենացոյ պատմութեան մէջ:” 217:

ԱՋԳԱՅԻՆ ԹԵՐԹԵՐԷ ԺԱՂԱՅՓՈՒՆՔ — 1. Նոր գաղափար մը, ազգին որքեք: — 2. Նուիրատուութիւն: — 3. Ուղղազրուեան ինչոյ մը: — 4. Ժողկաքաղն ու “Հայ դարձնականները:” — 5. Հայերն Նոր լրագիր մը: — 6. Ամերիկայի Հայոց թիւը: — 7. Հայ երգիչներ եւ երգչուհիներ: — 8. Թաւրիզի զէպքն առթիւ մեր զուշակութիւնը: — 9. Հայ լուսանկարիչներ: — 10. “Ժամանակիս հոգիք:” — 11. Նոր իրաւաբաններ. 219:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՑԵՍՈՒԹԻՒՆ 223:

ՀՐԱՏԱՐԱՎՈՐ ԵՒ ՊԱՏԱՄԱՆԱՏՈՒ ԽՄԱՐՈՐ

Հ. ԲԱՓԱՅԷԼ Վ. ՊԱՐՈՆՅ

ՎԻԵՆՆԱ, ՄԻԹՐՈՐԵԱՆ ԶԳՐԱՆ.